Մէտիքէրի Դեղագիրով Դեղորայք Գնելու Ծրագրի Ծախսերը Հոգալու Համար Օգնություն

Կյանքի Ապահովագրություն՝ Անվանական Եւ Կանխիկ Արժեքներ

Սոցիալական Ապահովության Վարչությունը եւ Մէտիքէրի ու Մէտիքէեդի Ծառայության Կետրոնը համատեղ աշխատում են ձեզ տրամադրելու հավելյալ օգնություն ձեր դեղագիրով գնելիք դեղերի ծախսերու համար: Որպէսզի որոշենք ձեր իրավասությունը այս հավելյալ օգնության, Սոցիալական Ապահովությունը պետք է իմանա ձեր եկամուտի եւ դրամական միջոցների չափը, օրինակ՝ ձեր խնայողությունների, ներդրումների եւ անշարժ կալվածի արժեքը (բացի ձեր տնից): Եթե ունեք սահմանափակ եկամուտ եւ դրամական միջոցներ, դուք կարող եք իրավասու լինել հավելյալ օգնություն ստանալու որպեսզի վճարեք ձեր ամսական շահաբաժինը, տարեկան պարտքի բաժինը եւ դեղագիրի ձեր բաժնի ծախսերը՝ ըստ Հունվար 1, 2006 թվականից սկսած Մէտիքէրի դեղագիրով դեղորայք գնելու ծրագիր:

Application for Help with Medicare Prescription Drug Plan Costs (Form SSA-1020)—«Մէտիքէրի Դեղագիրով Դեղորայք Գնելու Ծախսերը Հոգալու Ծրագրի» համար պետք է լրացնեք SSA-1020 դիմումնագիրը, որպեսզի Սոցիալական Ապահովության Վարչությունը որոշի ձեր իրավասությունը: Դիմումնագրի հարցերից մին առնչվում է կյանքի ապահովագրության անվանական եւ կանխիկ արժեքների հետ:

Ի՞նչ է տարբերությունը անվանական եւ կանխիկ արժեքների միջեւ

Դիմումնագրի 5-րդ հարցի միջոցով Սոցիալական Ապահովության Վարչությունը ուզում է իմանալ եթե դուք եւ ձեր կինը կամ ամուսինը, (եթե միատեղ ապրում եք) ունեք կյանքի ապահովագրություններ որոնց ընդհանուր անվանական արժեքը 1,500 դոլարից ավել է: անվանական արժեքը հաւասար է մահաւան արժեքին — այն գումարն է որ մահաւան ընթացքին կվճարվի: Եթե դուք 5-րդ հարցին պատասխանում եք «Այո», դուք պետք է հայտարարագրեք կանխիկ արժեքը՝ — այն գումարը որ դուք ներկայում կարող եք ստանալ — եթե նույնիսկ այն լինի անվանական արժեքից նվազ: Կարեւոր ծանուցում՝ կանխիկ արժեքը պակաս կը լինի եթե դուք պարտքի փող եք վերցրել այս ապահովագրական պայմանագրությունից:

Սոցիալական Ապահովությունը կընդունի ձեր տրամադրած տեղեկությունը կյանքի ապահովագրության կանխիկ արժեքի մասին եւ որեւէ այլ փաստաթղթեր չի պահանջի:

Արդյո՞ք բոլոր ապահովագրերը հաշվի են առնվում

Ոչ: Երբ Սոցիալական Ապահովության Վարչությունը որոշում է ձեր կյանքի ապահովագրությունների ընդհանուր անվանական արժեքը (մահվան կապակցությամբ նպաստներ), $1,500-ից **ավել լինի հաշվի չի առնում**.

- Ապահովագրական պայմանագրություն որը չի պարունակում կանխիկ արժեք (term insurance). կամ
- Թաղման ապահովագրական պայմանագրություն որ միայն թաղման ծախսերը վճարելու համար է:

Արդյո՞ք ապահովագրական ընկերությունները կարող են օգնել

Այո: Ապահովագրական ընկերությունները տեղյակ են Մէտիքէրի Դեղագիրով Դեղորայք Գնելու Ծրագրի մասին եւ իմանում են որ ստանալու են հարցումներ կանխիկ արժեքների կապակցությամբ՝ ապահովագրեր ունեցողներից կամ այն մարդկանցից, որոնք օգնում են նրանց հավելյալ օգնություն ապահովելու դիմումների գործերով:

Եթե չեք իմանում ձեր ապահովագրության պայմանագրի կանխիկ արժեքի չափը, կարող եք այդ տեղեկությունը ստանալ ձեր կյանքի ապահովագրության գործակալից կամ ընկերությունից:

Ես ինչպե՞ս կարող եմ լրացուցիչ տեղեկություն ստանալ

Մէտիքէրի Դեղագիրով Դեղորայք Գնելու Ծախսերը Հոգալու Ծրագրի մասին լրացուցիչ տեղեկություն ստանալու համար դիմե՛ք Սոցիալական Ապահովությանը՝ **1-800-772-1213** (խուլերը եւ դժվար լսողները կարող են հեռաձայնել հետեւեալ հատուկ թիւին TTY **1-800-325-0778**) հեռախոսահամարով կամ այցելե՛ք՝ ***www.socialsecurity.gov***:

Մէտիքէրի Դեղագիրով Դեղորայք Գնելու Ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկության համար, զանգահարե՛ք **1-800-MEDICARE** (**1-800-633-4227**) կամ այցելե՛ք՝ ***www.medicare.gov***:

www.socialsecurity.gov

Social Security Administration
SSA Publication No. 05-10108-AM
Getting Help With Medicare Prescription Drug Plan Costs
Life Insurance: Face And Cash Values (Armenian)
March 2006